Հաստատում եմ՝
«Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի նախագահ
---------- Է. Գրիգորյան
25.01 ---------- 2021 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոնը) Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (այսուհետ՝ ԱՊԷՔ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը ՀՀ օրենսդրությամբ, Քոլեջի կանոնադրության շրջանակներում և սույն կանոնադրությամբ նպաստում է Քոլեջի առքելության, որակի ապահովման ռամավարության ու քաղաքանակութան իրականացմանը:
2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ ԱՊԷՔ կանոնադրությթան և սույն կանոնադրության հիման վրա (հաստատվում է կառավարման խորհրդի որոշմամբ):
3. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է ԱՊԷՔ միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

2.ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կենտրոնի առաքելությունն է՝
   - նպաստել Քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը:
   - նպաստել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկ-վածության մակարդակի բարձրացմանը:
2. Կենտրոնի նպատակներն են՝
   - նպաստել Քոլեջում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրմանը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանմանը:
   - խթանել Քոլեջում բանիմաց, բազմակողմանի զարգացած միջին մասնագիտական որոկավորում ունեցող էներգետիկական կադրերի պատրաստմանը:
3. Կենտրոնի խնդիրներն են՝

- ԱՊԷՔ որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերական վերանայում:
- Քոլեջի հավատարմագրան, ինքնագնահատման գործընթացի կազմակերպում, համապատասխան զեկույցների պատրաստում և հաջորդող գործողությունների պլանավորման ու իրականացման համակարգում:
- ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում:
- կրթության որակի համար ԱՊԷՔ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական և վարչական կազմ) և արտաքին (դիմորներ, շրջանավարտներ, գործատուներ և այն) շահակիցների առջև:

4. **Կենտրոնի գործառույթներն են՝**

- Քոլեջի ՈԱ համակարգի օպերատիվ կառավարում և վերահսկում,
- մշակել, իրականացնել և շտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցել դրանց արդյունքների մասին,
- մշակել ԱՊԷՔ ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- կամակերպում է ԱՊԷՔ ինստիտուցիոնալ հավատարմագրման, ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման գործիքակազմերի մշակում և գնահատան իրականացում,
- որակի գնահատման համագործակցային աշխատանքների կազմակերպում և համակարգում:

- կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- Կնտրոնի անմիջական կառավարումն իրականացնում է կենտրոնի պատասխանատուն:
- Կենտրոնի պատասխանատուն պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը:
- Ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը և այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցությունը:
- Պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Կենտրոնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար:
- Իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ: